ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ)

Հաշվետու ժամանակահատվածում Հյուսիսային համալսարանն իր գործունեությունը ծավալելիս առաջնորդվել է բուհի ռազմավարական ծրագրում նախանշված ուղղություններով՝ նկատի ունենալով նաև բուհի վերաբերյալ 2018 թվականին փորձագիտական զեկույցում նշված դիտարկումներն ու առաջարկները: Մեր քայլերը պլանավորել ենք գլխավորապես նշված թերությունները հնարավորինս վերացնելու և մյուս բոլոր գործընթացները բարելավելու ուղղությամբ: Ու թեպետ առաջիկայում դեռևս շատ անելիքներ կան, սակայն պետք է նշենք, որ գրեթե բոլոր ուղղություններով կատարվել են զգալի աշխատանքներ, որոնք շարունակական բնույթ կկրեն և կապահովեն 2016-2020 թթ. ռազմավարական պլանում նշված գործողությունների վերջնարդյունքները:

Ներկայացնենք կատարված աշխատանքները՝ ըստ ռազմավարական զարգացման ծրագրի ուղղությունների 2018-2019 ուսումնական տարվա կտրվածքով.

1. Արդյունավետ կառավարում և վարչարարություն

Հաշվի առնելով փորձագիտական խմբի զեկույցում նշված թերությունները կառավարում և վարչարարություն չափանիշի վերաբերյալ, որում մասնավորապես նշվում է ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցածքի փոփոխման միջոցով կառավարչական որոշումների կայացման թափանցիկության օբյեկտիվության ապահովման անհրաժեշտության մասին, մենք նախաձեռնել և իրականացրել ենք հետևյալ քայլերը.

ա. Վերանայվել են համալսարանի մի շարք ստորաբաժանումների կանոնադրությունները՝ ստորաբաժանումների գործառույթները հստակեցնելու նպատակով:

բ. Վերանայվել են համալսարանում գործող մի շարք կարգեր և կատարվել փոփոխություններ՝ ուսումնական գործընթացը առավել արդյունավետ և ուսանողամետ դարձնելու նպատակով:

Օրինակ, «Հյուսիսային համալսարանում ավարտական աշխատանքի պատրաստման, պաշտպանության և գնահատման կարգը», «Հյուսիսային համալսարանում մագիստրոսական թեզի պատրաստման, պաշտպանության և

գնահատման կարգում» ներառվել է ևս մեկ կետ՝ «Մագիստրոսական թեզի պատրաստման և պաշտպանության ժամանակացույցը», որի նպատակը ուսանողի կատարած աշխատանքը յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում հստակեցնելն է: «Հյուսիսային համալսարան» ՍՊԸ-ի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման (ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի) պաշտպանության արդյունքների գնահատման լրացուցիչ քննարկման և բողոքարկման կարգում» հստակեցվել են գնահատման չափանիշները, գնահատման արդյունքների բողոքարկումը՝ ընդլայնելով սովորողների իրավունքները:

ԶԼՄ-ի միջոցով անհրաժեշտ տեղեկատվություն տարածելու, բուկլետներ, տեղեկատվական թերթիկներ, գովազդային պաստառներ տպագրելու և թիրախային լսարանին հասցնելու, հեռուստաընկերություններով գովազդային արշավներ կազմակերպելու համար 2017-18 ուստարում բուհը տրամադրել է շուրջ 1.3 մլն դրամ գումար, իսկ 2018-19 ուստարում՝ 1.5 մլն դրամ գումար:

2. Որակյալ կրթական համակարգ և մարդկային ռեսուրսների կառավարում

Միշտ հպարտությամբ ենք արձանագրել, որ Հյուսիսային համալսարանի ուժեղ կողմերից է **պրոֆեսորադասախոսական որակյալ կազմը**: Այդ մասին են վկայում նաև ուսանողների շրջանում անցկացված հարցումները, ուստի դասախոսական կազմի ճիշտ ընտրությունը, նրանց մասնագիտական որակների կատարելագործումը բուհի առաջնային խնդիրներից են: Ուսումնական գործընթացը նոր, որակյալ կադրերով համալրումը տեղի է ունենում պարբերաբար՝ Հյուսիսային համալսարանի **«Պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման»** ընթացակարգին համապատասխան: Համալսարանում ՊԴԿ ձևավորումն իրականացվում է մրցութային և արտամրցութային ընթացակարգով՝ պայմանագրային հիմունքներով, կիրարկվում են պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման ընթացակարգերը, սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները: Փաստենք նաև, որ վերանայված ու հաստատված է դասախոսների և վարչական անձնակազմի պաշտոնի անձնագրերի գերակշիռ մասը: Իր առաքելությունը իրագործելու համար համալսարանը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական և վարչական կազմով: Միաժամանակ նշենք,

որ դասախոսական ու վարչական կազմի կատարելագործումը, բուհը որակյալ մասնագետներով համալրելը շարունակական գործընթաց է և մշտապես բարելավման կարիք ունի: Զգտելով հավատարիմ մնալ «Պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» ընթացակարգին, այնուհանդերձ մենք երբեմն հարկադրված ենք լինում կիրառել նաև «Արտամրցութային կարգը» հատկապես այն պարագայում, երբ դասախոսական աշխատանքի համար դիմած անձը որպես մասնագետ եզակի է և ոլորտում մեծ հեղինակություն է վայելում, իսկ տվյալ մասնագետի՝ ուսումնական գործընթացում ներգրավելը չափազանց հրատապ է, և դա չի հակասում վերոնշյալ կարգի պայմաններին: Պրոֆեսորադասախոսական անձնակազմը հաշվետու տարում նշված կարգերին համապատասխան ընդլայնվել է այնպես, ինչպես վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը:

Մեր ուշադրության կենտրոնում ենք պահել նաև պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման գործընթացը մի շարք ուղղություններով՝ օտար լեզուների (անգլերեն), տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման (հեռավար կրթության Moodle համակարգ) և դասավանդման մեթոդիկայի: Հաշվետու ժամանակաշրջանում մեզ հաջողվել է վերապատրաստումներ իրականացնել անգլերենի և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ:
«Հեռակա ուսուցման դասընթացների կազմակերպում՝ հեռավար կրթական տեխնոլոգիաների զուգորդմամբ» դրամաշնորհային ծրագրի շրջանակում Հյուսիսային համալսարանի Ալավերդու մասնաճյուղում և Երևանում ստեղծվել են լաբորատորիաներ՝ համապատասխան կահավորմամբ ու համակարգչային տեխնիկայով: Ծրագրի շրջանակում, դարձյալ փուլային տարբերակով, վերապատրաստվել են ավելի քան 30 դասախոս Երևանում և Ալավերդու «Թումանյան» մասնաճյուղում: Վերապատրաստման դասընթացների ժամանակ մասնակիցները ծանոթացել են հեռավար կրթության տեխնոլոգիաներին և դրա առանձնահատկությունների՝ ավարտին արժանանալով հավաստագրերի:

Նշենք նաև, որ աստիճանաբար փորձում ենք հասնել այնպիսի գործելաոճի, որ կրճատենք մեկ դասախոսի կողմից բազմաթիվ դասընթացներ վարելու և մեկ դասաժամի ընթացքում տարբեր մասնագիտությունների ուսանողների միաժամանակ դասավանդելու պրակտիկան: Սակայն որոշ դեպքերում,

պայմանավորված կուրսի փոքր թվակազմով, դեռևս շարունակվում են համատեղ պարապմունքները: Ու թեպետ ուսման որակը դրանից չի տուժում, այնուհանդերձ առաջիկայում նախատեսում ենք լուծել փորձագիտական խմբի՝ որպես թերություն նշած այս խնդիրը:

Հավելենք նաև, որ համալսարանի դասախոսական և վարչական կազմին, ինչպես նաև ուսանողներին խրախուսելու նպատակով ամեն տարի անցկացվում է «-Լավագույն վարչական աշխատող», «Լավագույն դասախոս», «Լավագույն հետազոտող», «Լավագույն ասպիրանտ (հայցորդ)», «Լավագույն շրջանավարտ մասնագետ», «Լավագույն ամբիոն», «Լավագույն ֆակուլտետ» մրցույթը, որի հաղթողներն արժանանում են դրամական պարգևի կամ հավաստագրերի: Խրախուսանքի նման միջոցառումներն էապես բարձրացնում են աշխատանքի արդյունավետությունը, շեշտում լավագույնների հանդեպ բուհի ղեկավարության ուշադրությունը՝ ստեղծելով բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ և մղելով ավելի լավ աշխատանքի:

Մասնագիտական կրթական ծրագրերի կատարելագործումը, շուկայի պահանջներին համապատասխան որակյալ կադրեր պատրաստելը Հյուսիսային համալսարանի ռազմավարական ծրագրի առաջնահերթություններից է: Ուստի պարբերաբար վերանայվել են ՄԿԾ-ները, իսկ հաշվետու տարում առարկայական ծրագրերում արդեն իսկ հստակեցվել են ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքները, ուսումնական պլաններում կատարվել են փոփոխություններ՝ գործնական բաղադրիչների ավելացմամբ: Նշենք, որ Հյուսիսային համալսարանը մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկումն իրականացնում է **«Մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման կարգի»** համաձայն, որը 2017 թվականից է մտել գործածության մեջ:

Նշյալ կարգի համաձայն՝ ՄԿԾ-ներում ուսումնառության վերջնարդյունքների սահմանումները պարբերաբար վերանայվում և կատարելագործվում են՝ մասնագիտական հատուկ կոմպետենցիաներ ձևավորելու և դասավանդման արդյունավետ մեթոդաբանություն ընտրելու նպատակով:

Այս գործընթացները հավուր պատշաճի կատարելու համար համալսարանի աշխատակիցները պարբերաբար մասնակցում են «Որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից անցկացվող վերապատրաստումներին: Հաշվետու տարում վարչական 2 աշխատող մասնակցել են դրանց:

Հաշվետու տարում որակի ապահովման վարչությունը ևս կատարել է իր առաքելությունը՝ շարունակելով հետամուտ լինել տարբեր գործընթացների ուսումնասիրությանը, վերլուծել է և ներկայացրել դրանց արդյունքները՝ առաջարկելով լուծման տարբերակներ: Մասնավորապես, իրականացրել է ուսանողների կարիքների պարբերական վերհանում, որի հիման վրա կատարվել են բարելավմանն ուղղված քայլեր, անցկացրել է դասախոսների գնահատում ուսանողների շրջանում, վերլուծել արդյունքները, ինչի հիման վրա էլ լավագույն դասախոսը հաղթող է ճանաչվել համալսարանում ընդունված համանուն մրցույթում:

3.Ուսանողական համակազմի ընդլայնում

Հյուսիսային համալսարանի **ուսանողական համակազմի** ընդլայնումը կատարվում է պարբերաբար: 2019 թվականին **բակալավրի կրթական ծրագրով** առկա և հեռակա ուսուցմամբ 5 մասնագիտությունների գծով համալսարանն ավարտել է 289 ուսանող, որից 7-ը՝ գերազանցության դիպլոմով:

Մագիստրոսի կրթական ծրագրով /առկա և հեռակա/ 5 մասնագիտությունների գծով բուհն ավարտել է 35 ուսանող, որից 7-ը՝ գերազանցության դիպլոմով:

2. 2019-2020 ուստարվա I կիսամյակում համալսարան ընդունված, այլ բուհերից տեղափոխված և /կամ ուսանողական իրավունքները վերականգնած ուսանողների թվակազմը ըստ կրթական ծրագրերի (բակալավր, մագիստրատուրա), մասնագիտությունների, ուսուցման ձևի և կուրսերի.

1.Բակալավրի կրթական ծրագիր՝

№	Մասնագի-տական կրթական ծրագիրը	Ուսուց-ման ձևը	Կուրսը				Ուսանող-ների թիվը	
			I	II	III	IV		
1.	Իրավագի-տություն	առկա, հեռ.-առ.	13	1	-	-	14	108
		հեռակա	62	31	1	-	92	
2.	Կառավա-րում	առկա, հեռ.-առ.	18 +13	3	-	-	34	125
		հեռակա	60	30	1	-	91	
3.	Ծրագրային ճարտարա-գիտություն	առկա, հեռ.-առ.	-	-	-	-	-	26
		հեռակա	14	12	-	-	26	
4.	Տարրական մանկավար-	առկա, հեռ.-առ.	4 +11	-	1	-	16	43

	ժություն և մեթոդիկա	հեռակա	13	12	2	-	27	
5.	Նախադպ-րոցական մանկավար-ժություն և մեթոդիկա	առկա, հեռ.-առ.	-	-	-	-	-	18
		հեռակա	9	6	2	1	18	
6.	Մասնագիտ. մանկ. (անգլերեն լեզու և գրակ.)	առկա, հեռ.-առ.	5	-	1	-	-	6
		հեռակա	-	-	-	-	-	

Ընդամենը՝ 326

2.Մագիստրոսի կրթական ծրագիր՝

№	Մասնագիտությունը	Ուսուց-ման ձևը	Ուսանողների թիվը	
1.	Իրավագիտություն	առկա	5	26
		հեռակա	21	
2.	Կառավարում	առկա	-	4
		հեռակա	4	
3.	Տարրական մանկավարություն և մեթոդիկա	առկա	-	3
		հեռակա	3	
4.	Մասնագիտական մանկ. (անգլերեն լեզու և գրակ.)	առկա	-	4
		հեռակա	4	
5.	Մասնագիտական մանկ. (ինֆորմատիկա)	առկա	-	1
		հեռակա	1	

Ընդամենը՝ 38

Թեպետ 2017-2018 ուսումնական տարվա համեմատ 2018-2019 ուսումնական տարում համալսարանն ունեցել է ուսանողների թվաքանակի որոշակի անկում, ինչը բնորոշ է բոլոր ուսումնական հաստատություններին անխտիր՝ պետական և ոչ պետական: Ուսանողների թվաքանակի անկումը պայմանավորված է ժողովրդագրական իրավիճակով, տարեցտարի դպրոցն ավարտող աշակերտների թվի կտրուկ անկմամբ, ինչը բնականաբար անդրադառնում է նաև բարձագույն ուսումնական հաստատություններ դիմող ուսանողների թվի վրա: Սակայն նույնիսկ այս պարագայում ուսանողների թվաքանակը կարելի է բավարար համարել: Ասվածը ներկայացնենք թվերով՝

2017-2018 թթ (բակալավրիատ՝ 1268, մագիստրատուրա՝ 114), 2018-2019 թթ. (բակալավրիատ՝ 1235, մագիստրատուրա՝ 103):

Ավելի մեծ թվով ուսանողներ ներգրավելու նպատակով կազմակերպվում են հանդիպումներ ավագ դպրոցների բարձր դասարանների աշակերտների հետ, տրամադրվում են տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ, ցուցադրվում են համալսարանի գործունեությունն արտացոլող տեսանյութեր ու գովազդային հոլովակներ: Բուհում պարբերաբար կազմակերպվում են նաև տարաբնույթ միջոցառումներ՝ ավագ դպրոցների ու միջին մասնագիտական կրթօջախների աշակերտների, ուսուցիչների ու տնօրենների մասնակցությամբ: Ասվածի վկայությունն է 2019 թ. «Թումանյան-150» ծրագրի շրջանակներում ԿԳ նախարարության աջակցությամբ համալսարանում կազմակերպված համադպրոցական օլիմպիադայի անցկացումը, որին մասնակցեցին շուրջ 33 դպրոցների բարձր դասարանների 150 աշակերտներ, ուսուցիչներ ու տնօրեններ: Ուսանողների հավաքագրման գործընթացը առավել արդյունավետ դարձնելու նպատակով օգտագործվում են տեղեկատվության տարածման տարբեր միջոցներ՝ բուհի northern. am կայքը, ֆեյսբուքյան էջը: Հանրապետական մամուլում պարբերաբար տպագրվում են բուհին առնչվող գովազդային և իրադարձային հոդվածներ, տարբեր հեռուստաընկերություններով հեռարձակվում են գովազդային հոլովակներ ու տարբեր միջոցառումների վերաբերյալ ռեպորտաժներ: Այս ամենով հանդերձ, առաջնայնությունը տրվում է բուհի կայքէջով տեղեկատվության տարածմանը հայերեն և անգլերեն լեզուներով: Օտարալեզու նյութերի առկայությունը կայքում հնարավորություն է տալիս ուսանողական համակազմը ընդլայնել նաև այլազգի ուսանողներով: 2018 թ. փետրվարին վերագործարկված կայքէջը հնարավորություն է ընձեռում առդիոձայնագրությունների հեռարձակմանը և ավելի ծավալուն նյութեր զետեղելուն, համեմատաբար բարելավվել են հետադարձ կապի մեխանիզմները:

Ուսանողների ներգրավմանը նպաստում են ոչ միայն նշված գովազդային արշավները, այլ նաև բուհ-դպրոց-միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ակտիվ համագործակցությունը՝ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի, շրջանավարտների և կարիերայի

կենտրոնի և այլ ստորաբաժանումների կողմից կազմակերպվող հանդիպումների, միջոցառումների միջոցով:

2017-2018 ուսումնական տարում ուսանողներին հատկացվել է անվճար սովորելու 13 տեղ, 2018-2019 ուսումնական տարում՝ 4 տեղ: Սովորողների սոցիալ-տնտեսական կարիքները բավարարելու, ինչպես նաև նրանց մեջ ուսման հանդեպ ավելի մեծ շահագրգռվածություն առաջացնելու նպատակով համալսարանում գործում են ճկուն գեղչեր, կրթաթոշակներ, ինչպես նաև անվճար տեղեր: Օրինակ, 2018-2019 ուսումնական տարում **անվանական կրթաթոշակների** արժանացած ուսանողներն են՝

- Իրավագիտության ֆակուլտետ

1. *Վիկտոր Համբարձումյանի անվան կրթաթոշակ՝*
   Մովսիսյան Գոհար - «Իրավագիտություն» մասնագիտության III կուրս
2. *Վազգեն Մարգսյանի անվան կրթաթոշակ՝*
   Ստամբուլյան Պողոս - «Իրավագիտություն» մասնագիտության III կուրս
3. *Սողոմոն Թեհլերյանի անվան կրթաթոշակ՝*
   Հակոբյան Մարինե - «Իրավագիտություն» մասնագիտության III կուրս
4. *Կամո Ուղումյանի անվան կրթաթոշակ՝*
   Սարգսյան Աննա - «Իրավագիտություն» մասնագիտության III կուրս

- Բանասիրության և մանկավարժության ֆակուլտետ

1. *Հովհաննես Թումանյանի անվան կրթաթոշակ՝*
   Մեսրոպյան Նոնա - «Հոգեբանություն» մասնագիտության III կուրս

- Ալավերդու «Թումանյան» բաժանմունք

1. *Հովհաննես Թումանյանի անվան կրթաթոշակ՝*
   Վարդևանյան Ասյա - «Կառավարում» մասնագիտության III կուրս
2. *Արտեմ Միկոյանի անվան կրթաթոշակ՝*
   Սոսյան Աշխեն - «Կառավարում» մասնագիտության III կուրս

Միաժամանակ, որպես խրախուսանքի միջոց, **պատվոգրեր** են հանձնվել տարբեր ֆակուլտետների 13 ուսանողի:

Բավականին ակտիվ են գործում նաև ուսանողական խորհուրդը, ֆակուլտետների խորհուրդները, ուսանողների գիտական ընկերությունը և որակի ապահովման վարչության ուսանողների հանձնաժողովը: Ուսանողները ներգրավված են ամենատարբեր միջոցառումների, գիտաժողովների կազմակերպման գործընթացում: Ավելին, բազմաթիվ ծրագրեր բուհում կյանքի են կոչվել հենց նրանց նախաձեռնությամբ: Հիշատակության են արժանի համալսարանի ուսխորհրդի և ՈՒԳԸ նախաձեռնությամբ ու ջանքերով 2019 թ. Ապրիլյան պատերազմի

մասնակիցներին նվիրված կաբինետի բացումը, իրավագիտության ֆակուլտետում Ֆեմիդայի արձանի տեղադրումը, նույն ֆակուլտետում բուհի առօրյան արտացոլող լուսանկարների մշտական ցուցահանդեսը, նաև մասնակցությունը այլ բուհերի տարբեր ինտելեկտուալ խաղերի, բանավեճերի, գրական դատերի և դատախաղերի: Պարբերական բնույթ են կրում այնպիսի միջոցառումների կազմակերպումը, ինչպիսիք են «Հայաստանի անկախության օր», «Հայկական բանակի օր», «Հայաստանի առաջին հանրապետության օր», «Հյուսիսային համալսարանի օր», «Գիտելիքի օր», «Ուսանողների միջազգային օր», «Գիտության միջազգային օր» և այլն: Նմանօրինակ միջոցառումները ճանաչողական լինելուց բացի՝ նպաստում են նաև երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը, ազգային արժեքների նկատմամբ հարգանք ու հպարտություն ձևավորելուն: Հիշեցնենք, որ բուհի ռազմավարական ծրագրում մեծապես կարևորվում է երիտասարդ սերնդի մեջ նման որակներ ձևավորելը, որպես հայրենասեր քաղաքացիներ դաստիարակելը, ուստի նման միջոցառումների անցկացումը հետապնդում է նաև այդ նպատակը: Վերոնշյալ միջոցառումների շրջանակներում էլ սովորաբար հայտնի են դառնում անվանական կրթաթոշակների արժանացած ուսանողների անունները: Հիշեցնենք, որ համալսարանում վաղուց ի վեր հաստատվել են մի շարք անվանական կրթաթոշակներ՝ **Հ. Թումանյանի անվան, Վազգեն Սարգսյանի, Սողոմոն Թեհլերյանի, Նիկոլայ Ռիժկովի և այլ:**

Հաշվետու տարում իր գործունեությունն ակտիվացրել է նաև **շրջանավարտների և կարիերայի կենտրոնը:** Մասնավորապես, բուհի շրջանավարտների վերաբերյալ հստակ տեղեկատվություն ձեռք բերելու ուղղությամբ կատարվել են որոշակի աշխատանքներ: Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, անմիջական կապ ստեղծելով շրջանավարտների հետ, հավաքել ու համակարգել է նրանց վերաբերյալ տեղեկատվությունը՝ աստիճանաբար ընդլայնելով տվյալների բազան: Կենտրոնը պարբերաբար նյութեր է զետեղում կայքէջում և ֆեյսբուքյան էջում համալսարանի՝ կարիերայում հաջողություններ գրանցած շրջանավարտների վերաբերյալ: Այս գործընթացն ունի շարունակական բնույթ և չի սահմանափակվում հաշվետու ժամանակաշրջանով:

Ըստ ուսումնական տարիների նախատեսված է իրականացնել տվյալների վերլուծություն՝ շրջանավարտների աշխատանք գտնելու հիմնախնդիրները

բացահայտելու և դրանց լուծմանն աջակցելու նպատակով: Հաշվետու տարում մեկ ուսանող կամավոր աշխատանք է կատարել ՎՏԲ-Հայաստան բանկում: Մեկ այլ ուսանող էլ հարցազրույցի փուլում տնօրենի որոշմամբ կամավոր աշխատանքի փոխարեն ընդունվել է աշխատանքի որպես անգլերեն լեզվի ուսուցչուհի: Շարունակելով համագործակցությունը տարբեր գործատուների հետ՝ կենտրոնը բուհի կայքէջում և ֆեյսբուքյան էջում պարբերաբար հայտարարություններ է զետեղում նաև պահանջվող թափուր հաստիքների համար:

Կենտրոնը ակտիվ գործունեություն է ծավալել նաև ուսանողներին կարիերայի խորհրդատվության ապահովման, ուսանող-ոլորտի մասնագետ հանդիպումների կազմակերպման, շրջանավարտների հետ հարցումներ անցկացնելու միջոցով: Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը սովորողների կարիերային նպաստելու նպատակով պարբերաբար կազմակերպում և իրականացնում է դասընթացներ և սեմինարներ հրավիրված մասնագետների միջոցով: Հաշվետու ժամանակաշրջանում նմանատիպ դասընթացներ և սեմինարներ կազմակերպվել են Microsoft Excel ծրագրի գործիքների կիրառման, սոցիալական ձեռնարկատիրության, մարդկային ռեսուրսների կառավարման, բանկերի ծագման և պատմական զարգացման վերաբերյալ: Անցկացվել է թրեյնինգ «Մարդկային ռեսուրսների կառավարում» թեմայով:

Ուսանողներին մասնագիտական խորհրդատվությամբ ապահովելու նպատակով շրջանավարտների և կարիերայի կենտրոնը կազմակերպում է նաև հանդիպումներ ոլորտի կայացած մասնագետների հետ: Իսկ համալսարանի ուսանողների, շրջանավարտների և պոտենցիալ գործատուների միջև կապը ամրապնդելու նպատակով 2019 թվականին կենտրոնը բավականին ընդլայնել է իր գործունեության շրջանակները՝ համագործակցելով ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, Մուշեղ Իշխանի անվան թիվ 5 հիմնական դպրոցի, «Հրաշք տնակ» մանկապարտեզի, «Թիկ-թակ» մանկական զարգացման կենտրոնի, «Զիրքոն դենտ» ատամնատեխնիկական լաբորատորիայի, «ԱՊԱԳԱ» հոգեբանական կենտրոնի, «ՖԱՍԹ ԿՐԵԴԻՏ ԿԱՊԻՏԱԼ» ունիվերսալ վարկային կազմակերպության, «ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ» ընկերության և «Երիտասարդների հնարավորություններ» ՀԿ-ի հետ:

Հյուսիսային համալսարանի շրջանավարտների կարիերայի և պրակտիկայի կենտրոնը 2019 թվականին կազմակերպել է ուսումնական, մասնագիտական, գիտա-մանկավարժական և գիտահետազոտական պրակտիկա, ինչպես նաև մի շարք մաս-նագիտական դասընթացներ և թրեյնինգներ:

Ուսումնական վարչության պրակտիկայի բաժնի կողմից մշակվել են ուսա-նողների պրակտիկայի օրագրերի ձևանմուշները: Ինչպես նաև վերամշակել է շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կարգը:

Նշենք նաև, որ հաշվետու տարում կենտրոնի գործունեության բոլոր ուղղությունների վերաբերյալ համակողմանի տեղեկատվություն է զետեղված համալսարանի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում: Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ կենտրոնը իր գործունեության բոլոր ուղղությունների վերաբերյալ կատարել է լուրջ ու հետևողական աշխատանք:

4.Հետազոտություն և գիտահետազոտական պոտենցիալ

Համալսարանի ղեկավարությունը հիմնադրման օրից ի վեր իր ուշադրության կենտրոնում է պահել դասախոսական կազմին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու հարցը: Բուհի դասախոսների գիտական ներուժը բացահայտելու, նրանց հետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով համալսարանում պարբերաբար կազմակերպվել են հանրապետական ու միջազգային գիտաժողովներ, կլոր սեղաններ ու բանավեճեր: Ասվածի ապացույցն են հրապարակված գիտական հոդվածների ժողովածուները: Այս գործընթացը առավել ակտիվացնելու և արդյունավետ դարձնելու համար բուհում ստեղծվել է գիտական հետազոտությունների, նորարարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոնը, իսկ 2016-2020 թվականների զարգացման ռազմավարական ծրագրով Հյուսիսային համալսարանը նախատեսել էր ակտիվացնել կենտրոնի գործունեությունը, հստակեցնել, համակարգել հետազոտական ուղղությունները՝ դրանում ներգրավելով նաև ուսանողությանը: Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնը ակտիվացրել է աշխատանքները՝ ոչ միայն ձևավորելով նոր՝ համակարգողի հաստիք, այլև հստակեցվել են կենտրոնի ղեկավարի ու համակարգողի գործառույթները, ինչն իր արտահայտությունն է գտել պաշտոնի անձնագրերում:

Նկատի ունենալով փորձագիտական խմբի դիտարկումները համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ՝ առավել հստակեցվել են բուհի մասնագիտական ամբիոնների և համալսարանի հետազոտական աշխատանքի գլխավոր ուղղություններն ու թեմաները: Մասնավորեցնենք՝ «Հայաստանի սոցիալ-տնտեսական առաջընթացի արդի հիմնախնդիրները», «Ժամանակակից ինտելեկտուալ համակարգերը», «Ազգերի ինքնորոշման իրավունքը և պետությունների տարածքային ամբողջականության հարցը՝ արդի միջազգային իրավունքի համատեքստում. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակով», «Ցեղասպանությունների հետևանքների հաղթահարման և դրանց կանխարգելման ու դատապարտման արդի հիմնախնդիրները» և այլն:

Բուհի տարեգիրքը՝ «Հյուսիսափայլ» գիտական հոդվածների ժողովածուն ևս հնարավորություն է տալիս համալսարանի աշխատակիցներին՝ տպագրվել անմիջապես «տանը»:

Համալսարանի գիտահետազոտական գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում **թումանյանագիտությունը,** որի զարգացման ուղղությամբ մեծ աշխատանքներ են տարվել: Դեռս 2009 թ. ստեղծվել է «Վերնատուն» թումանյանագիտական կենտրոնը, մեծ գրողի կյանքին վերաբերող յուրաքանչյուր հիշարժան իրադարձություն բուհում նշանավորվում է նոր գիտաժողովի կազմակերպմամբ: Ասվածի վկայությունն է «Թումանյան-150» ծրագրի շրջանակներում կազմակերպված միջազգային գիտաժողովը **«Հովհաննես Թումանյանի հոգևոր ժառանգությունը և արդիականությունը»** խորագրով՝ արտերկրի գիտնականների մասնակցությամբ: Իսկ մինչ այդ Թումանյանին նվիրված ևս չորս գիտաժողով է անցկացվել, որոնց նյութերն ամփոփված են համապատասխան ժողովածուներում: Հաշվետու տարում կազմակերպված գիտաժողովում թումանյանագիտական թեմաներով զեկուցումներով հանդես են եկել նաև արտասահմանյան մի շարք երկրների ճանաչված մասնագետներ, գիտության դոկտորներ: Գիտաժողովի նյութերը հրատարակվել են առանձին ժողովածուով:

Կենտրոնը նաև համագործակցում է Հայաստանի և արտասահմանյան մի շարք բուհերի և գիտական կազմակերպությունների հետ՝ նպաստելով ինչպես մեր դասախոսների մասնակցությանը արտերկրում կազմակերպված գիտաժողովներին

ու կոնֆերանսներին, այնպես էլ բուհի նախաձեռնած միջազգային գիտաժողովներում ապահովելով նրանց մասնակցությունը: Արդյունավետ համագործակցության շնորհիվ արտերկրի մի շարք գիտական հանդեսներում և ժողովածուներում տպագրվել են բուհի դասախոսների գիտահետազոտական հոդվածները: Իսկ համալսարանի որոշ աշխատակիցների գիտական հրապարակումները արտերկրում արժանացել են մեծ ուշադրության: Խոսքը մասնավորապես վերաբերում է կենտրոնի ղեկավար Գ.Ասատրյանի գիտահետազոտական գործունեության արժևորմանը: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր մեր աշխատակիցը վերջին տարիներին հաջողությամբ տպագրվել է նաև արտասահմանյան երկրների՝ Ռուսաստան, Գերմանիա, Ավստրիա և այլն, մի շարք գիտական պարբերականներում ու ժողովածուներում: Նրա հրապարակումներից շատերն արժանացել են միջազգային մասնագիտական հանրության, գիտական պարբերականների ուշադրությանը: Առաջիկայում նախատեսվում է Գ. Ասատրյանի հոդվածներից մեկի տպագրումը աշխարհի հեղինակավոր ամսագրերից մեկում՝ հեղինակային իրավունքների լիակատար պաշտպանությամբ և ամսական հոնորարների վճարմամբ՝ վաճառքից ստացվող գումարի 12-50%-ի չափով: Մենք շեշտում ենք այս փաստը՝ հաշվի առնելով նաև փորձագիտական խմբի այն դիտարկումը, որ անհրաժեշտ է բուհի հետազոտական գործունեության արդյունքների առևտրայնացումը և հետազոտությունը որպես եկամտի աղբյուր ծառայեցնելը:

Այս ուղղությամբ հաշվետու տարում ձեռնարկվել են որոշակի քայլեր: Մասնավորապես, համալսարանի շահած դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները՝ **բուհական համակարգում հեռավար ուսուցման իրականացման, դրա սկզբունքների ներդրման ու կիրառման վերաբերյալ,** առևտրային որոշակի պայմաններով առաջիկայում կտրամադրվեն այլ բուհերի:

Համալսարանում պարբերաբար կազմակերպվող միջազգային, միջհամալսարանական գիտաժողովներին ուսանողների մասնակցությունն ապահովելու, և ընդհանրապես ուսանողությանը գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով ստեղծված ուսանողական գիտական ընկերությունը հաշվետու տարում ևս գործել է ակտիվորեն:

լավագույն աշխատակիցներին պարգևատրելուն, ինչպես նաև պարբերաբար կազմակերպվող միջոցառումները, գիտաժողովները, այլ ծրագրեր ֆինանսավորելուն: Պետք է նշել, որ պայմանավորված միջոցառումների քանակով ու ծավալով, ֆինանսի չափը յուրաքանչյուր ուսումնական տարում կարող է տարբեր լինել: Օրինակ, 2017-2018 ուստարում ծախսվել է շուրջ երկու միլիոն ՀՀ դրամ, իսկ 2018-2019 ուստարում՝ ավելի քան երեք միլիոն: Առաջիկայում մենք ֆինանսական պլանավորումը կկատարենք ավելի երկար ժամանակահատվածի համար՝ ռազմավարական ծրագրին համապատասխան, հստակեցնելով յուրաքանչյուր ստորաբաժանմանն անհրաժեշտ գումարի չափը: Ռեսուրսների համալրման, բարելավման առումով անգնահատելի է հեռավար ուսուցման լաբորատորիայի դերը: Համալսարանում դեռևս 2018 թ. դրամաշնորհային ծրագրի միջոցով ներդրված է հեռավար ուսուցման համակարգը, որը դեռևս իրականացվում է փուլ առ փուլ՝ դեռևս 2018-2019 ուսումնական տարվանից համակարգը ներդրվել է տնտեսագիտության կառավարման և ինֆորմատիկայի ֆակուլտետում:

Այսպիսով փաստենք, որ հաշվետու տարում զգալի աշխատանքներ են կատարվել բուհի տեխնիկական հագեցածության ուղղությամբ: Վերանորոգվել են համալսարանի մի քանի աշխատանքային սենյակներ, լաբորատորիաներ՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակում, ներառյալ՝ Ալավերդու «Թումանյան» մասնաճյուղը: Համալսարանի շենքում անընդհատ իրականացվում են ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Բուհի ռազմավարական ծրագրով կարևորվում է համալսարանում **հաշվետվողականության մեխանիզմի ապահովումն ու կատարելագործումը,** արտաքին ու ներքին թիրախային լսարաններին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելը, հետադարձ կապի մեխանիզմները կատարելագործելն ու պարբերաբար կիրարկելը: Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը հաշվետու տարում ևս հավատարիմ է մնացել ռազմավարական ծրագրով իրեն վերապահված գործառույթներին: Մասնավորապես, վերագործարկվել է northern. am պաշտոնական կայքեջը, որում զետեղվել է հսկայածավալ տեղեկատվություն՝ բուհի կարգերը, հաշվետվությունները, համալսարանին առնչվող կարևոր փաստաթղթերը, ֆակուլտետների, մասնագիտությունների, ընդունելության կարգի, ուսման վարձավճարների և համալսարանին առնչվող այլ նյութեր:

Կայքէջում պարբերաբար զետեղվում են նաև բուհի նորությունները, միջոցառումների, տարաբնույթ հանդիպումների մասին հրապարակումները, ներհամալսարանական քննարկումների, սեմինարների ու բարձրագույն կրթության օրենքի նախագծերի քննարկումների վերաբերյալ նյութերը: Ընդլայնվել է մի շարք բաժինների վերաբերյալ տեղեկատվական բազան՝ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, արտաքին կապերի և այլն: Ընդլայնվել է նաև կայքի տեսադարանը՝ համալսարանին առնչվող տեսանյութերով, թարմացվել է էլեկտրոնային գրադարանի շտեմարանը: Կայքը ընդլայնել է նաև օտարալեզու նյութերի հրապարակումը՝ օտարալեզու շահառուին ընձեռելով բուհի վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու հնարավորություն: Ավելի մեծ թվով ուսանողներ ներգրավելու նպատակով բաժինը պարբերաբար ստանձնում է գովազդային բուկլետների պատրաստումն ու տպագրումը գլխավորապես հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև տեղեկատվական թերթիկներ ու թեմատիկ պաստառներ: Հանրությանը, մասնավորապես թիրախային լսարանին ծավալուն տեղեկատվություն փոխանցելու նպատակով բաժինը կիրառում է **«Գովազդային արշավներ ԶԼՄ-ներով»** մեթոդը: Դրանց արդյունավետությունը որոշելու համար դիմորդների շրջանում պարբերաբար անցկացվում են հարցումներ, որոնք հնարավորություն են տալիս ընդհանուր պատկերացում կազմելու գովազդային արշավների արդյունավետության վերաբերյալ: Հարցումների արդյունքների հիման վրա բաժինը ծրագրել է կիրառել գովազդային արշավների առավել ազդեցիկ տարբերակները:

Համալսարանի գործունեությանն առնչվող ողջ տեղեկատվությունը փոխանցելով արտաքին ու ներքին լսարանին, լուսաբանելով բոլոր միջոցառումներն ու նախաձեռնությունները՝ լրատվության բաժինը միաժամանակ ակտիվորեն կապ է պահպանել արտաքին ու ներքին թիրախային լսարանի հետ՝ հարցումների միջոցով վեր հանելով նրանց կարիքներն ու պարզելով բավարարվածությունը բուհի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվության մասին: Վերոնշյալ նյութերի հիմնական մասը տեղ է գտել նաև ֆեյսբուքյան էջում և **«Հյուսիսային համալսարան»** պաշտոնաթերթում ու հանրապետական մամուլում: Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը՝ հավատարիմ մնալով բուհի ռազմավարական ծրագրում նախանշված ուղղություններին, հաշվետու տարում կազմակերպել և ուղղորդել է տարբեր ԶԼՄ-ներով իրականացվող գովազդային արշավները: Մասնավորապես, հաշվետու

ժամանակաշրջանում Կենտրոն հեռուստատեսության եթերով հեռարձակվել է բուհի գովազդային հոլովակը, իսկ Facebook սոցիալական ցանցով տարածվել է ընդլայնված գովազդ՝ ընդգրկելով թիրախային ավելի մեծ լսարան: Բաժինը հավաքել ու վերլուծել է համալսարանին վերաբերող տեղեկատվությունը՝ համապատասխան վերլուծությունների հիման վրա կազմակերպելով հետագա աշխատանքները: 2019 թ. տեսել «Հյուսիսային համալսարան» պաշտոնաթերթը, դրա հավելվածը՝ ամբողջությամբ նվիրված բուհում կազմակերպված թումանյանական միջոցառումներին, ինչպես նաև բուկլետներ, տեղեկատվական թերթիկներ, տեղեկագրեր, բոլոր միջոցառումների վերաբերյալ թեմատիկ պաստառներ: Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը բավականին ակտիվ է եղել նաև թումանյանական միջոցառումների կազմակերպչական աշխատանքները իրականացնելիս: «Թումանյան-150» ծրագրի շրջանակներում կյանքի կոչված շուրջ տասը միջոցառումներում վարչության աշխատակիցները ոչ միայն իրականացրել են տեղեկատվական ապահովման գործառույթը՝ համապատասխան նյութերի պատրաստում, տեսանկարահանումներ, այլև ներգրավված են եղել կազմակերպչական տարաբնույթ աշխատանքներում՝ արժանանալով պատվոգրերի ու դրամական պարգևի:

Բաժինը հաջողությամբ համագործակցում է բոլոր ստորաբաժանումների հետ, խորհրդատվական հանդիպումներ է իրականացնում ուսանողների հետ՝ իրազեկելով նրանց իրավունքների և պարտականությունների, ուսման վարձերի զեղչերի մասին: Հաշվետու տարում կենտրոնը պատրաստել է ուսանողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ և ուսանողների առաջարկությամբ փոփոխություններ է կատարել այդ թերթիկներում:

Կենտրոնը հաշվետու տարում հատկապես ակտիվացրել է համագործակցությունը տարբեր դպրոցների հետ: Տարաբնույթ միջոցառումների շրջանակներում կազմակերպված հանդիպումները նպաստել են համալսարանի և դպրոցների միջև կապի ամրապնդմանը, բարիդրացիական հարաբերությունների ձևավորմանը և համալսարանի վերաբերյալ տեղեկատվության փոխանցմանը:

Հանդիպումներ են կազմակերպվել մասնավորապես ավարտական դասարանների աշակերտների հետ (N: 94, 29, 46, 42, 97 դպրոցներ) «Թումանյան-150» ծրագրի շրջանակներում: Հանդիպման ընթացքում շուրջ 70 աշակերտներ լրացրել են

հարցաթերթիկները, որոնց նպատակը բուհի իրազեկվածության վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերելու աղբյուրները ճշտելն է: Լրատվության և հասարակայնության հետ կապերի աշխատակազմը կատարում է նաև խմբագրական աշխատանքներ, պարբերաբար նյութեր է հրապարակում բուհում «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի շուրջ քննարկումների, դրանից բխող եզրակացությունների մասին՝ դրանք զետեղելով հանրապետական մամուլում և համալսարանի լրատվամիջոցներում:

6. Արտաքին կապերի զարգացում և միջազգայնացում

2018- 2019 ուսումնական տարում բավականին ակտիվ գործունեություն է ծավալել նաև **արտաքին կապերի բաժինը**: Այսպես, 2019թ. մարտի 18-22-ը ռոմանագերմանական և ռուս բանասիրության ամբիոնի վարիչ **Ք. Ռշտունին**, մասնակցելով Erasmus+ KEY 107 դասախոսների փոխանակման ծրագրին «Գործնական անգլերեն» դասընթացի 8 ժամ է դասավանդել Ժեշուվի համալսարանում: Հարկ է նշել, որ 2019թ. մարտի 18-22-ը Հյուսիսային համալսարանում վերոնշյալ ծրագրի շրջանակում հյուրընկալեց Լեհաստանի Շեցինի համալսարանի իրավագիտության դասախոս **Քրիստոֆ Վեսոլովսկուն**, որը միջազգային տրանսպորտային իրավունքի 8 ժամ դասավանդել է իրավագիտության 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողներին:

2019 թ. ապրիլին մշակվել և թարգմանվել է օտարազգի ուսանողների համար նախատեսված բուհի կրթական ծրագիրը և տեղադրվել erasmusplus.am համապատասխան կայքում՝ (https://erasmusplus.am/home/ wpcontent/uploads/2019/07/List-of-Armenian-Univer-sities NEO-AM 2018.pdf):

2019 թ. մայիսի 31-ին Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի շրջանավարտ և **Նյու Յորքի Գոլդեն Սաքս** բանկի աշխատակից **Ռոբերտ Դավթյանը** հեռավար դասախոսություն է կարդացել ուսանողների և համալսարանի ավագ դպրոցի աշակերտների համար:

2019 թ. մայիսին Հյուսիսային համալսարանը երկկողմ համաձայնագիր է կնքել Պուշկինի անվան Լենինգրադի պետական համալսարանի հետ:

2019 թ. հունիսին Լատվիայի պետական համալսարանի հետ ևս կնքվել է երկկողմանի համաձայնագիր:

2019 թ. հոկտեմբերի 7-11 Erasmus+ KEY Action 107-ի շրջանակում տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս **Բակուր Մարտիրոսյանը** վերապատրաստվել և դասախոսություններ է կարդացել **Յան Ամոս Կոմենսկու անվան Լեհաստանի Լեշնոյի** բարձրագույն կրթության դպրոցում: 2019թ. նոյեմբերին Հյուսիսային համալսարանում կազմակերպվեց հանդիպում-քննարկում միջազգային փոխանակման՝ «Erasmus+ KA 107» ծրագրի մասնակիցներ, համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոսներ Հարություն Խալաթյանի, Բակուր Մարտիրոսյանի և համալսարանի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի հետ:

Հյուսիսային համալսարանի արտաքին կապերի բաժինը **Էրազմուս+**հայաստանյան գրասենյակի հետ համատեղ հոկտեմբերի 16-ին կազմակերպել է տեղեկատվական հանդիպում համալսարանի ուսանողների հետ: Հանդիպման ընթացքում մասնակիցները ծանոթացել են **Էրազմուս+** ծրագրի կողմից առաջարկվող կրթաթոշակային հնարավորություններին:

2019 թ. հոկտեմբերին Հյուսիսային համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների համար դասախոսությամբ հանդես է եկել **Լեհաստանի Սիլեսիայի համալսարանի դասախոս Հրայր Մաղաքյանը:**

Հարկ է նշել, որ **Յան Ամոս Կոմենսկու** անվան Լեհաստանի Լեշնոյի բարձրագույն կրթության համալսարանի հետ բուհն ունի 2 ուսանողի փոխանակում՝ միջհամալսարանական պայմանագրերի հիմունքով: Իսկ առաջիկայում Լեհաստանի Շեցինի համալսարանի հետ նախատեսվում է 1 ուսանողի փոխանակում Erasmus+ KEY Action 107-ի շրջանակում:

Անդրադառնալով նաև համալսարանի **որակի ապահովման** բաժնի կատարած աշխատանքներին՝ նշենք, որ որակի ապահովման ներքին համակարգի շարունակական կատարելագործումը, համալսարանական գործունեության բոլոր տիրույթներում ՊԻԳԲ շրջափուլի փակումը առանցքային նշանակություն ունեցող խնդիրներ են մեզ համար: Բաժնի արդյունավետ գործունեությունը պայմանավորված է բուհի բոլոր ստորաբաժանումների հետ սերտ համագործակցությամբ, ուստի կարևոր է գիտակցել դա՝ մշտապես աշխատելով համակցված կերպով:

Համալսարանի 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի այս չափանիշով նախատեսված էր ապահովել բոլոր մակարդակներում հաշվետվողականությունը,

Այսպիսով, կարելի է ասել, որ համալսարանի ռազմավարական ծրագրի բոլոր ուղղություններով կատարվել են զգալի աշխատանքներ, հնարավորինս փորձել ենք վերացնել փորձագիտական խմբի նշած թերությունները, որոշ գործընթացներ բարելավման փուլում են, սակայն ակնհայտ է, որ դեռևս շատ են անելիքները, ուստի առաջիկա հավատարմագրման ընթացքում դրական արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է համախմբվել, աշխատանքներ տանել թերությունները վերացնելու, առկա գործընթացները բարելավելու ուղղությամբ: Միայն այս գործելաոճով Հյուսիսային համալսարանը կարող է հաղթահարել իր առջև ծառացած դժվարությունները և իրականացնել ռազմավարական ծրագրով նախանշված իր առաքելությունը:

Համալսարանի ռեկտոր *Բ. Մակիչյան*